**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.1**
**ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-ԱԴԲՆԱ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **19 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 19-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում տեղի ունեցավ անասնաբուժական դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման թիվ ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-ԱԴԲՆԱ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Կ. Մարտիրոսյան՝ ՀՀ ԱԱԾ ՌԲՎ աշխատակից,
Ա. Գալումյան՝ ՀՀ ԱԱԾ ՌԲՎ աշխատակից,
Շ. Աճեմյան՝ ՀՀ ԱԱԾ ՌԲՎ աշխատակից,
Ա. Սողոմոնյան՝ ՀՀ ԱԱԾ ՌԲՎ աշխատակից:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Կ. Մարտիրոսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղարը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է չորս անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, ինչով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում ներկայացված հարցման և տրամադրված պարզաբանման մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ և ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով Ընթացակարգի շրջանակում ստացված հարցման բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես, տեղեկացվեց, որ 18.06.2026թ-ին ժամը 10:09:19-ին Մասնակցի կողմից ստացվել է հարցում (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի գործընկերներ, Հայտնում ենք Ձեզ, որ «Ախտորոշման բժշկական հավաքածուներ» անվանմամբ, 2 լոտով պահանջված ապրանքը

առկա է մեր պահեստում CanLiv 4 թեստի տեսքով, որը նախատեսված է լեյշմանիոզի, էրլիխիոզի, անապլազմոզի հակամարմինների և դիրոֆիլարիոզի (Dirofilaria immitis) հակագենի հայտնաբերման համար: Առկա քանակը՝ 30 թեստ, Պիտանելիության ժամկետը՝ 09/2026, Մեկ թեստի արժեքը՝ 5,950 ՀՀ դրամ: Ձեր կողմից նախատեսված բյուջեի շրջանակներում կարող ենք մատակարարել տվյալ ապրանքից 25 հատ քանակով: Խնդրում ենք հայտնել Ձեր համաձայնությունը կամ մերժումը նշված առաջարկի վերաբերյալ: Հարգանքով,»:

19.06.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Պատասխանել հարցում ներկայացրած Մասնակցին հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի մասնակից, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 22-րդ ենթակետի «հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:»:

2. Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրությանը կից Հավելված 1-ի:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի հրավերով և հայտարարությամբ սահմանված օրը և ժամին՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Կ. Մարտիրոսյան ______________

*Հանձնաժողովի անդամ՝*

Ա. Գալումյան ______________

Շ. Աճեմյան ______________

Ա. Սողոմոնյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ______________